

Սուր սուր փուշեր ծածկեն ըզվարդ պրսակին :
Արտաքուստ փայլ՝ սակայն մըռայլ է ներքին :

Ժբպտող աչերն ո՛րչափ թափած են արցունք .
Ո՛րքան հառաչ են արձակած զուարթ շրթունք ..
Օրորողէն կ'անումք վշտաց նախկին դատ ,
Կհանձն է վշտաց յաջորդութիւն անպակաս :

Մի՛րո վշտակիր , զի՞ զու ողբաս յուսահատ ,
Միայն դու չես որ կը տանջին վըշտաշատ .
Մարդը պիտի կըրէ ցաւեր անընդհատ ,
Ինչ վիճակի մէջ լինի , հոխ կամ աղքատ :

Վիշտը կենաց է յարակից հանգամանք .
Վիշտը հոգւոյն կուտայ կորով եւ զարգանք .
Կաղնին լինէր սրկար նըման եղէգան՝
Թէ բաղխէին զայն ոչ մըրրիկը ձըմիրան :

Ծով որ այնքան է սրտապարւս ի լուսնեակ ,
Միթէ հընա՛ր է որ լինի անկոհակ .
Ի՛նչպէս ապա հընար է որ կինաց ծով
Ձուսնանայ իւր վշտերն , արցունք ու վրդով :

Դու որ կուլաս՝ յիշէ՛ որ այլք ալ լացին .
Թաղաւո՛րք ալ քեզ պէս ի սուգ հեծեցին .
Կըրել , ժպտիլ , այս է կենաց դատակնիք .
Գերեզմանին մէջ է կենաց մեր . զաղտնիք :

Առաջին համբոյր

Քաղցրիկ էին աչեր քո , կո՛յս ,
Որ յիմ վերայ կը ցոլային ,
Եւ թըւէին ինձ մշտաւոյս
Աստղեր չողալ՝ կապոյտ յերկին :

Գեղեցիկ էր առաւօտն այն ,
Եւ դու՛ բազմեալ ի դաշլըճին ,
Դաշնակին մօտ՝ յագեղող ձայն
Մըրմընջէրի երգ մ'երկնային :

Հէ՛գ Արայի էին ողբեր
Առեալ ի քէն ի նուազ անուշ ,

Յորում ոգւոյդ էիր զըրեր
Բոլոր զգացմունս նուրբ եւ քնքուշ :

Այն ձայն ի խոր սրտիս կ'ազդէր
Իբր ալեւուս հրեշտակային ,
Որ կուսափայլ ծոցեդ թուէր
Լընդով զօգիս ըզմալլաղին :

Աչերս յարցունք՝ մերձեցայ քեզ ,
Քո՛ք եւս էին արտասուայից .
Իմք՝ սիրավառ , քոյինք՝ միշտ հեզ ,
Հանցիպեցան միմեանց անկեղծ :

Ծակաւորս յիրար էին կըքած .
Մըրմընջեցի . « Հրեշտակ ես դու . »
Շեկնեցար անդ , եւ ամօթղած
Ակնարկ տըրի ինձ յուսատու :

Սրտապնդեալ՝ փարեցայ քեզ ,
Քաղիլ յայտէ՛ղ վարդակարմիր
Համբոյր մի սուրբ , ծարուակէջ ,
Ընդդիմացար , քաղցր չեծեցիր :

Շրթունքս յայնժամ յանդգնեցան
Հըսիլ չըրթանց քո ծաղկաբոյր .
Եւ իրարու հետ կնքեցան
Ի նախընծայ կենաց համբոյր :

ԽՈՐԷՆ ՆԱՐԳԷՑ



ՄԱՔՍԻՄ ԳՕՐԿՈՒ ՆԱՄԱԿ



ԿՈՎԿԱՍԻ ԴԷՊԵՐԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Յարգելի ընկեր ,
Ի՛նչ եմ մտածում եւս Կովկասի այժմեան
դէպքերի մասին : Հարցնում էք զուք :

Ամօթալի եւ ցաւալի է կարգալ եւ լսել

* Այս նամակը . որ 8—9 ամիս առաջ ուղարկուած է
Կովկասեան մի ուսու լրագրի խմբագրութեան , այդ քերթի մէջ
է հրատարակուած :

այն, ինչ որ կատարուում է ձեզ մօտ ։ Ես այն-
քան ջերմ սիրում եմ այդ սիրուն երկիրը . որ
հոկայական գեղեցկութեան հեռու մարմնա-
ցումն է , նրա լեռները , ձկնհերթով թեալու-
ած , ձորերը եւ հովիտները , արագահոտ եւ
երգեցելի գետերը ուրախ աղմուկով լցնոյն , եւ
նրա գեղեցիկ ու հպարտ զաւակներին ։

Լինելով կողմնաւոր եւ ամենուրեք տեսել
եմ , ի՛նչպէս հանգիստ եւ բարեկամաբար կից
առ կից աշխատում էր Վրացին թուրքի եւ Հայի
հետ , ի՛նչպէս մանկական ուրախութեամբ , եւ
պարզ կասանքներ էին անում , երգում եւ ծի-
ծաղում : Եւ այնպէս դժուար էր հաստատ , որ
այդ պարզամտ եւ բարի մարդիկ այժմ բխմամբ
եւ անխմաստ կոտորում են միմեան , երկաթ-
կուեղով չար եւ միջին ուժի աղբահոտ թեանք ։

Մարդկանց դատաւարութիւնը չի ճշուում ինձ
այնքան , որքան յիմարտութիւնը մարդկանց , որ
չեն հասկանում , որ իրանց խաւար կրքերի հետ
խաղում է մի արտաքին չար ուժ ։ Ինձ թւում է ,
որ համայն մեր երկրի համար ամենաթաքե-
լարի նոտ ողբերգութիւնը Բաղուում եւ երեւա-
նում իւր շարժառիթով չի զանազանում Քիչի-
նեւում եւ Վարչապալատ , ժիթմոթում եւ Լօ-
ձիւում կատարուած համաժամանակ ողբերգու-
թիւն-
ներէյ : Նախիջևանում , Կուրքում , Ռիկայում
եւ Իլամիսովօ-Վոլոնտասիկում — ամենուրեք
երեւում է քառմեկի գործը մի խումբ մարդ-
կանց , որոնք խնդրացել են իրենց իշխանու-
թիւնը երկրի վրայ կորցնելու երկիւղից . մարդ-
կանց , որոնք ձգտում են արինալ հանգցնել
պայծառ վառուած հուրը ժողովրդի գիտակցու-
թեան : Մի ժողովրդի , որ ճանաչել է , վերջա-
պէս , իւր իրաւունքը : ինչի սեպական կանգնե-
ծեւերի հեղինակը ։

Այդ մարդիկ սովորել են սիրել , նրանք այն-
պէս լաւ էին ապրում , երբ կարող էին , ոչ ոքի
իրանց գործունէութեան մասին հաշիւ տալով :
Նրանք սովոր էին կարգադրել մեր երկրի վի-
ճակը եւ հարստութիւնները , ժողովրդի ոյժը
եւ արիւնը : Նրանք սովոր էին համարել Ռու-
սիան իրանց սեպական կալուածքը եւ բռնի
պահում էին իրաւադուրկ ժողովուրդը տղիտու-
թեան եւ կեղտի մէջ , որպէս զի թուլացնեն
նրա հոգին , չը թողնեն ածիլ նրա եռանդը , դար-
ձնեն նրան Վոյր եւ համբ ստորեկ , իրանց կամ-
քին հաւատարմի :

Անպատժութիւնից լրքացած մարդկանց ցի-
նիզմով , իրանց ոյժը ճանաչող անասունների
արձակ դաժանութեամբ նրանք անում էին ամէն
ինչ , որ սպանեն ժողովրդի ստեղծագործող ու-
ղին : Բայց նրանք , այդ ուղղութիւն մարդիկ , որ
իրանց համարում են երկրի ամբողջ կեանքի
տէրեր — աղէտ են եւ բթամիտ , չեն հասկա-
նում , որ նոյնպէս անկարելի է ժողովուրդը
դարձնել կոյր , մեքենայական ոյժ , որչափ կուլ-
կասի ամուր ժողովրդը դարձնել մը բռնու կա :

Մարդկանց անմիտ եւ տմարդի հալածանքը
չի հանգցրել մեր երկրում համարձակ եւ ազատ
մտքի հուրը : Այն բոլորովում է աւելի ու աւելի
պայծառ եւ զօրեղ , անգամ կորցնող տեսնում
են այժմ նրա կատարել քայլը : Այն անսպասելի
վառում է ամենուրեք եւ ծարաւ է ձուլուելու
ու մի հակայական եւ ուրախալի բոց դառնալու ,
մի ստակալի փոթորիկ բոլոր խեղացի եւ աղնիւ-
մարդկանց բողբոլի այն բռնութեան դէմ , որին
ենթակայ են այդ մարդիկ մայրենի երկրի ըն-
տիր հիւնէրով յղիացած անքանքար եւ անհիմն
ձրիակերներ խաբակի կաղից :

Ձրիակերները զգում են , որ մօտենում է
իրանց հոգեւարքը եւ մահը մերձ է , բայց ու-
զում են ապրիլ եւ մաքաթիլ , որպէս կարող են ,
ժողովրդի կամքի դէմ եւ մաքաթում են անաղ-
նիւ , երկչոտ եւ խայտառակ ։

Նրանք կեանքի յաւակից բարձրագոյնում են
բուրք , ինչ որ մուկն է եւ աղտոտ , ինչ որ
այլանդակում է իրանց զործադրած ճնշումից՝
մարդկային կերպարանը կորցնելու չափ , բո-
լորը , ինչ որ չահումը է , ծախու , զապրելի , եւ
դիշակերների եւ զազաւների այդ բոլթ խուժանը
արձակում են երկրի լաւագոյն մարդկանց դէմ ,
որպէս զի իրականութեան նրանց եւ գէթ մի տարի
եւս պահեն իրանց անզօր ձեռներում իշխանու-
թիւնը ։

Նրանք արձակում են ինչպէս չների , Ռուս-
ներին՝ Հրէաների , Լեհացիների եւ Ֆինների ,
Թուրքերին՝ Հայերի եւ Վրացիներ , սովից
բխացած անմիտ մուժիկին՝ ուսանողների եւ
նոյն իսկ երեխաների վրայ : Եւ այժմ էլ կարող
է լինել — եթէ վաղը Թուրքերը պահանջեն
մարդկային իրաւունքներ — նրանց դէմ կ'ու-
ղարկեն Կրիկիներին եւ մօրդկան , որպէս զի
նրանց ջնջեն ուրիշի ձեռներով . . . Ամենուրեք

միեւնոյնն է . պարագիտներէ չար ոյժը իւր գրութիւնը պաշտպանելու համար կանչուեմ է երկրի ամենավայրենի եւ ամենատիւմար մարդկանց այդ մարդկանց դէմ , որոնք անկեղծաբար եւ անչափ ցանկանում են իրանց երկրի եւ ժողովրդի համար բարիք եւ ազատութիւն :

Մարդկային պատմութեան ամբողջ տարածութեան վրայ , ոչ մի երկրում ղեկավարող դատավարդի կոխը իւր իշխանութիւնը ժողովրդի վրայ պահպանելու համար այնչափ խայտառակ , անամօթ եւ լրբաբար դժան չի տարուել , որչափ մեր երկրում եւ մեր արեւնայի օրերում . Որպիսի՞ զարչելի եւ ողորմելի անզօրութիւն է զգացուեմ այդ մարդկանց մէջ , որ արեւցել եւ իրանց թափած արեւնից եւ իրանց մահուան նախազգացումից :

Որպիսի՞ արհամարհանք պիտի յարուցանի եւրոպացիներէ մէջ մեր երկրիը չնորհու այն հանգամանքի , որ մեզ կատարաւորները այս երկրի մէջ կեանքի են կոչում միայն այն , ինչ որ անսանական է , կոպիտ եւ դազանային , աշխատելով նրանով ջլատել բոլորը , ինչ որ ճշմարտապէս ստեղծագործական է , աշխիւ եւ մարդկային :

Այն օրերը , որ մենք անց հնք կացնում , ամբողջ երկրի հոգեկան նորոգման նախընթացն են , բայց այն կռիւը , որ մղվում է Ռուսիայում , զէպի լոյս եւ նոր կեանք եղած ձգտման դէմ — այդ կռիւը պատմութեան մէջ կ'արձանագրուի իբրեւ մէկը մարդկութեան կեանքի ինքնացընում կատարուած ամենազաղբիւի գործունէութեանց . . . Այդ կռիւը չի կարող երկար տեւել , վասն զի իշխելը լրացնում է մարդկանց , նրանք , որոնց այսօր իշխանութիւն է տրուած՝ անպատիւ կողոպտել եւ սպանել , զեռ շատ չեն թողնել այդ իշխանութիւնը նրանց ձեռքից : Այն ձեռը , որ երէկ ջարդել է Հայի եւ Հրէայի գլուխը նրա համար միայն , որ սրանք իրանց զատու մարդիկ են զգացել աւելի վաղ , քան Ռուսը եւ Թուրքը — ո՞վ գիտէ վաղը ումի՞ պիտի ոյտի իջնէ : Նրա կոյր թափը եւ հարուածը — դիւրին է դադարեցնել , Հարկաւոր է միայն , որ Կովկասի եւ Ֆինլանտիայի , Լեհաստանի եւ Ռուսիայի բոլոր լաւագոյն , բուրբ ազնիւ մարդիկ միմեան եւ դառնան մարտնչող բարեկամներ մի ընտանիք , աշխիւների

եւ անվեհերների մի խումբ , միմեան եւ հարցնեն միմեանց .

— Ո՞վ է մեր Թշնամին :

Պատասխանը գտնել դժուար չէ :

Բոլոր մարդիկ , — Թուրքերը , Ռուսները , Հայերը եւ Հրէաները , Լեհերը , Ֆինները — բոլորը մի բան են միայն ցանկանում — ապրիլ աւելի լաւ , քան ապրում են այժմ : Եւ բոլորը համահաւասար չունին ազատութիւն չունին իրաւունք ապրիլ համաձայն իրանց ցեղային , կրօնական եւ աւանդական պայմանների :

Ի՞նչ է նախ եւ առաջ հարկաւոր մարդու եւ ժողովրդի բարեաւաճման համար :

Իրաւունք ազատօրէն որոշելու իւր անձնակոն եւ հասարակական ցանկութիւնները , իրաւունք ազատօրէն կազմելու ընկերական կեանքի ձեւերը կարելոյն չափ ընդարձակ իւր ոգու եւ իւր ցեղի ոգու բարգաւաճման համար :

Եւ միթէ՞ Հայը զրկո՞ւմ է Թուրքին այդ ազատութիւնից , եւ միթէ՞ Վրացին , Միթէ՞ Ռուսը , Հրէան եւ Լեհացին կաշկանդուած չեն՝ ոտքով ու ձեռքով նոյն ուժով , որ համահաւասար ծանրութեամբ բարձուած է եւ Թուրքի ուսերի վրայ :

Մեր ամենքի թշնամին մէկ է :

Եւ ամենքը , ումի՞ բանականութիւնը պայծառ է , ումի՞ կամքը չի ենթարկուած ստրկացման , պարտաւոր են միմեան ի մի ընտանիք՝ կռուելու համար այն չար եւ անմիտ ոյժի դէմ , որը միատեսակ ծանրութեամբ ճնշում է մեզ ամենքիս :

Մեր ամենքի թշնամին մի է :

Թող ուրեմն մեր ամենքի միջեւ լինի — հաւասարութիւն եւ եղբայրութիւն . Թող ամենքիս պայծառացնէ բանականութեան լոյսը , ծուլութիւն եւ դառնանք մի մեծ , անյաղթելի կամք եւ այն ժամանակ —

Կեցցէ՞՛ ազատութիւնը :

ՄԱՔՍԻՄ ԳՐԻԿԻՅ

